ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ 2022-23 Թ. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐ ԵՎ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐ

2022-23 ուս. տարում կնքվել կամ վերահաստատվել են համագործակցության 11 հուշագրեր և պայմանագրեր.

- Տրուբիլինի անվան Կուբանի պետական համալսարան
- Վրաստանի գյուղատնտեսական համալսարան
- Ուրալի պետական ագրարային համալսարան
- ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոն
- Խուզեստանի գյուղատնտեսական գիտությունների և բնական պաշարների համալսարան
- Լյուբլյանայի համալսարան
- Տրնավայի ՍՍ Կիրիլ և Մեթոդիուսի համալսարան
- Լայբնիցի անցումային տնտես.-ի գյուղ. զարգացման ինստիտուտ (ԼԱՏԳԶԻ), Հալլե (Զալե)
- Գիտության դաշնային պետական բյուջետային հաստատություն Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի Սիբիրի ագրոկենսատեխնոլոգիաների դաշնային գիտական կենտրոն
- Փոխըմբռնման հուշագիր կամ ակադեմիական համագործակցություն Վիտաուտաս Մագնուս համալսարանի և ՀԱԱՀ-ի միջև
- "Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի Սանկտ Պետերբուրգի դաշնային գիտահետազոտական կենտրոն"գիտության դաշնային պետական բյուջետային հաստատության (ՌԳԱ ՍՊԴՀԿ) (Ռուսաստանի Դաշնություն)

ԷՐԱԶՄՈՒՍ+ ՀԳ1

2022-23 թթ. Էրազմուս+-ի շրջանակներում ՀԱԱՀ-ն ունի կնքված 37 պայմանագրեր (որից նոր՝ 15 պայմանագրեր, իսկ 22-ը՝ նախորդ տարվանից), և ընդհանուր առմամբ ՀԱԱՀ-ն այս ծրագրով համագործակցում է 35 համալսարանների հետ: Սկսած 2015 թ.-

ից ամեն տարի Էրազմուս+-ի պայմանագրերի ու համագործակցող համալսարանների քանակն ավելանում է:

2022-23 թթ. ՀԱԱՀ-ն իրականացրեց աննախադեպ արտագնա շարժունություն, ապահովելով ավելի քան 87 աշխատակիցների վերապատրաստումներ և դասախոսություններ եվրոպական տարբեր համալսարաններում և ընդունեց 29 աշխատակիցների, ընդհանուր՝ 27 համալսարաններից: Չնայած անցյալ տարվա համեմատությամբ մեկնած ուսանողների թվաքանակը 3-ով ավելին է, սակայն 69 առկա ուսանողական տեղերից օգտագործվեց ընդամենը 8-ը:

Հաշվետու տարում ՀԱԱՀ-ն Էրազմուս+ ծրագրով առաջին անգամ սկսել է համագործակցել նաև Ֆրանսիայի և Հունգարիայի հետ, վերականգնվել է համագործակցությունը Բուլղարիայի հետ:

Էրազմուս+ շարժունության տվյալներ

		Արտագնա		**Ներգնա**
	Հաստատություն	ուսա-նող	աշխա-տակից	աշխա-տակից
1.	Ավստրիայի բն. գիտ. և կենսագիտ. համալսարան, Ավստրիա		7 +1 ԱՈՒԿ Արթուր Գրիգորյանը հուլիսին վերջին մեկնել է	
2.	Գազենհայմի համալսարան, Գերմանիա	1	3	8
3.	Բրագանսայի Պոլիտեխնիկական ինստիտուտ, Պորտուգալիա		2	1
4.	Մինհոյի համալսարան, Պորտուգալիա		1	
5.	Էվորայի համալսարան, Պորտուգալիա		1	
6.	Ավեիրոյի համալսարան, Պորտուգալիա		1	
7.	Բեժայի Պոլիտեխնիկական ինստիտուտ, Պորտուգալիա	2	4	
8.	Պանթեոնի հասարակագիտական և քաղաքագիտական համալսարան, Հունաստան		4	2

9.	Արևմտյան Ատտիկայի համալսարան, Հունաստան	1	3	2
10.	Կլուժ-Նապոկայի գյուղատնտեսական և անասնաբ. բժշկ. համալսարան, Ռումինիա		1	
11.	Էստոնիայի կենսագիտական համալսարան, Էստոնիա	1	2	3
12.	Կաստելո Բրանկոյի պոլիտեխնիկական ինստիտուտ, Պորտուգալիա		2	4
13.	Շաբացի կիրառական գիտությունների ակադեմիա, Սերբիա			1
14.	Տուշայի համալսարան, Իտալիա		12	
15.	Տերամոյի համալսարան, Իտալիա	1	2	1
16.	Վալադոլիդի համալսարան, Իսպանիա		4	
17.	Ալմերիայի համալսարան, Իսպանիա	1		
18.	Վալենսիայի պոլիտեխնիկական համալսարան, Իսպանիա		1	
19.	Յագիելոնյան համալսարան, Լեհաստան		1	
20.	Վրոցլավի բնապահպանության և կենսագիտության համալսարան, Լեհաստան			1
21.	Շչեցինի համալսարան, Լեհաստան	1	1	
22.	Աթենքի գյուղատնտեսական համալսարան, Հունաստան		7	4
23.	Պիրեուսի համալսարան, Հունաստան		4	
24.	Աթենքի ազգային պոլիտեխնիկական համալսարան, Հունաստան		8	
25.	Թրակիայի Դեմոկրիտուսի համալսարան, Հունաստան		9	
26.	Կրետեի համալսարան, Հունաստան		4	2

27.	Մալթայի մշակույտի, գիտության և տեխնոլոգիայի քոլեջ, Մալթա		1	
	Ընդամենը	**8**	**87** 88	**29**





Վերջին տարիներին ՀԱԱՀ-ում նկատվում է անգլերենին տիրապետող ուսանողների նվազում: Այսպես, 2022-23 թթ.-ին աշխատակիցներ և ուսանողների

համար հայտարարված բազմաթիվ մրցութային տեղեր մնացին թափուր (Կլուժ-Նապոկայի գյուղատնտեսական գիտությունների և անասնաբուժական բժշկագիտության համալսարան, ուսանող – 1 թափուր, Գայզենհայմի համալսարան, ուսանող – 3 թափուր, Թրակիայի Դեմոկրիտ, Պանթեոնի, Կրետեի, Աթենքի ազգային տեխնիկական, Պիրեուսի համալսարաններ, աշխատակից – 3 թափուր, Պանթեոնի հասարակական ու քաղաքական գիտությունների համալսարան, աշխատակից – 1 թափուր, Գայզենհայմի համալսարան, աշխատակից – 1 թափուր, Շչեցինի համալսարան, աշխատակից - 1 թափուր, Վալենսիայի պոլիտեխնիկական համալսարան, աշխատակից - 1 թափուր, Սալոնիկի Արիստոտելի համալսարան, աշխատակից - 1 թափուր, Ալմերիայի համալսարան, աշխատակից - 1 թափուր, Պիրեուսի, Թրակիայի Դեմոկրիտեսի համալսարաններ, ուսանող – 1 թափուր, Ավստրիայի բնական ռեսուրսների և կենսագիտությունների համալսարան, ուսանող – 2 թափուր): Դրանք վերաբերում են ՀԱԱՀ բոլոր ֆակուլտետներին:

Միաժամանակ նկատվում է նաև անգլերենին տիրապետող աշխատակիցների քանակի կտրուկ նվազում: ՄԿԴ-ն հետևողականորեն փորձում է հնարավորություն տալ այն աշխատակիցներին մասնակցել շարժունությանը, ովքեր կամ չեն մասնակցել, կամ ավելի վաղ են մասնակցեն դրան: Սակայն, անգլերենին տիրապետող աշխատակիցների խիստ անբավարարության պատճառով ընտրող հանձնաժողովը ստիպված է լինում նույն աշխատակցին 2-3 անգամ մասնակցել շարժունության նույն տարում, ինչը ստիպված քայլ է ՄԿԴ-ի կողմից: Հակառակ դեպքում եվրոպական համալսարանները կդադարեն համագործակցությունը ՀԱԱՀ-ի հետ:

ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ ՄԻՏՎԱԾ ԾՐԱԳՐԵՐ

SMARTI Էրազմուս+ ՀԳ2

2023 թ.-ի ապրիլի 3-12-ը SMARTI «Աջակցություն անգլերենով դասավանդելու նորարական մեթոդաբանությանը, մոտեցումներին և գործիքակազմի կիրառմանը՝ կրթության արդյունավետությունը, կայունությունը և միջազգայնացումը բարելավելու նպատակով») ծրագրի շրջանակներում՝ ՄԿԿԲ գծով պրոռեկտոր Մ. Մովսիսյանը, Կարիերայի զարգացման և շարունակական կրթության բաժնի վարիչ Լ. Վարդանյանը, Լեզվի ուսուցման կենտրոնի համակարգող Գ. Սևոյանը գործուղվեցին ՄԹ-ի Լիվերպուլի

Ջոն Մուրսի անվան համալսարան՝ «Անգլերենը, որպես դասավանդման միջոց ուսումնական մոդուլների ստեղծման վերապատրաստման» դասընթացին մասնակցելու նպատակով:

ՀԱԱՀ-ն պատասխանատու է՝ հետևյալ մոդուլների համար. EMI Oral Teaching Skills Part 1 Module և ESP Pathway Program Module:

Կազմակերպվել են մի շարք հանդիպումներ, ինչպես Հայաստանի, այնպես էլ ՄԹ գործընկերների հետ, որտեղ առաջ են քաշվել մոդուլների մշակման, գրականության ձեռքբերման և մի շարք այլ խնդիրներ: Ծրագրի շրջանակներում ընթացքի մեջ է գույքի և գրականության ձեռքբերման գործընթացը:

GeoTAK Էրազմուս+ ՀԳ2

2022թ հոկտեմբերի 10-15-ը ՀԱԱՀ-ում տեղի ունեցավ տեխնիկական վերապատրաստում և սեմինար, որին ներկա էին 62 մասնակից 14 կազմակերպություններից, այդ թվում՝ GeoTAK թիմի անդամներ, ուսանողներ, դասախոսներ Հայաստանի և Ղրղզստանի 3 համալսարաններից, Եվրոպայի՝ 4 համալսարաններից: Այդ ընթացքում իրականացվեց դրոնների լաբորատորիայի բացումը ՀԱԱՀ-ում, նոր PhD ուսումնական պլանի մշակման վերաբերյալ սեմինար, հանդիպումներ կադաստրի կոմիտեում և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունում, ԵՊՀ-ում և ԵՊՃՇՀ-ում:

2022թ. նոյեմբերի 27-ից դեկտեմբերի 10-ը տեխնիկական վերապատրաստումները շարունակվեցին Վալենսիայում և Բրյուսելում: Դրանք նվիրված էին մշակութային ժառանգության տվյալների հավաքագրմանն ու փաստաթղթավորմանը՝ օգտագործելով գեոմատիկական տեխնիկա: ՀԱԱՀ-ից մասնակցեցին՝ ծրագրի համակարգող, ջրային և հողային ռեսուրսների ամբիոնի վարիչ, պրոֆ. Գ. Եղիազարյանը, ծրագրի հետազոտող, դոցենտ Ն. Ալոյանը, ծրագրի վարչական աշխատակից, ասպիրանտ Ա. Համբարձումյանը և դրոնների լաբորատորիայի վարիչ Ս. Կարապետյանը: Վերադառնալուց հետո մասնակիցները ձեռք բերված փորձով կիսվեցին իրենց գործընկերների և ուսանողների հետ:

Հերթական վերապատրաստումներ կայացան 2023 թ. մայիսի 29-ից հունիսի 10-ը Ղրղզստանի Բիշկեկ և Օշ քաղաքներում, իսկ հունիսի 19-ից 25-ը՝ Ստոկհոլմում

(Շվեդիա), որոնք նվիրված էին շրջակա միջավայրի մշտադիտարկմանն ու ռիսկերին, ինչպես նաև նորարարությանն և ձեռներեցությանը բարձրագույն կրթության մեջ: Թարմացվել և վերանայվել են PhD ուսումնական ծրագրերը: Հրապարակվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանն առ այն, որ թույլատրվում է GeoTAK ծրագրի շրջանակում «Երևանի պետական համալսարան», «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» և «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամներին «ԻԴ.03.01 Աշխարհագրություն» և «Ե.23.06 Գեոդեզիա, ներառյալ քարտեզագրություն և կադաստր» մասնագիտություններով իրականացնել համատեղ հետբուհական փորձնական կրթական ծրագիր՝ կրեդիտների փոխադարձ ճանաչման պայմանով:

AFISHE Էրազմուս+ ՀԳ2

Նախագծի մեկնարկը տրվեց 2023 թ. հունվարին՝ ՀՀ ԳԱԱ-ում կայացած առաջին հանդիպման միջոցով, որին ներկա էին համագործակից համալսարանների ներկայացուցիչները, ներկայացուցիչներ ԿԳՄՍ և ՇՄ նախարարություններց, Էրազմուս+ ազգային գրասենյակից, գործատուներ և այլն: Նախագծի շրջանակում մշակվել են «Ձկնային տնտեսություն» համատեղ մագիստրոսական կրթական ծրագրի վերջնարդյունքները, ՄԿԾ-ն, մոդուլները, իրականացվել է հսկայական ծավալի բենչմարք և կազմվել է դրա հաշվետվությունը: Մինչև տարվա ավարտ իրականացվելու է նաև լաբորատոր սարքավորումների ձեռքբերում: Հունիսին Նիտրայում կայացավ նախագծի երկրորդ հանդիպումը, որի ընթացքում քննարկվեցին կատարված աշխատանքները, ինչպես նաև պլանավորվեցին վերապատրաստումների ընթացը և կազմակերպումը:

T-GREEN Էրազմուս+ ՀԳ2

ՀԱԱՀ-ն գործընկեր համալսարաններից մեկն է և այս նախագծի շրջանակում ՀԱԱՀ-ում պետք է մշակվեն երկու համատեղ մագիստրոսական կրթական ծրագրեր: Եռամյա նախագիծը բուհերում իրականացվող հետբակալավրի կրթության անհրաժեշտ բարեփոխումներին ուղղված նախագիծ է, որի համար առանցքային է «կանաչ» քաղաքականությունը: Նախագծի իրականացումը բուհերին հնարավորություն կտա

ավանդական կրթական ծրագրերից անցում կատարել դեպի ապագային միտված, կանաչ եւ միջառարկայական ուսումնական ծրագրերին՝ խթանելով ուսանողների շարժունությունը, մշակելով համատեղ որակավորման աստիճան շնորհող կրթական ծրագրերի իրականացման կառուցակարգեր:

Նախագծի հիմնական նպատակն է ազգային եւ հաստատութենական վարչական կազմի, որոշումներ կայացնողների, քաղաքականություն մշակողների, մանկավարժների, հետազոտողների եւ ուսանողների այնպիսի կարողությունների զարգացումը, որոնց միջոցով նշված դերակատարները կկարողանան հարակայուն զարգացման նպատակները եւ բնապահպանական խնդիրները ինտեգրել քաղաքականության եւ կրթական բովանդակության մեջ:Աշխատանքային հանդիպումներ են տեղի ունեցել Երևանում և Սալոնիկում, որտեղ մասնակիցները քննարկել են կրթական ծրագրերի առանձնահատկությունները, դրանց իրականացման ուղիները և ժամանակացույցը:

VISEGRAD+

2022-23 թթ. ՀԱԱՀ 5 փորձագետների կողմից կազմվեցին փափուկ հմտությունների վերաբերյալ 5 մոդուլներ: 2023 թ. մայիսին ՀԱԱՀ-ում կայացած նախագծի ավարտական հանդիպումը, որին մանսակցեցին ՀԱԱՀ դասախոսներ և ուսանողներ, ԿԳՄՍ փոխնախարար Ա. Մարտրիոսյանը, Էրազմուս+ ազգային գրասենյակի ներկայացուցիչները, ինչպես նաև եվրոպական համալսարաններից ժամանակ հյուրեր և նախագծի փորձագետներ: Այդ օրը ՀԱԱՀ-ում բացվեց նաև Փափուկ հմտությունների զարգացման կենտրոնը:

Ներկայումս մշակված որոշ մոդուլների ուղղությամբ ՀԱԱՀ փորձագետներն իրականացնում են արտաքին և ներքին շահակիցների վերապատրաստումներ: Աուդիտորական ծառայությունը նախագծի շրջանակում կատարված բոլոր ծախսերի վերաբերյալ տվել է դրական եզրակացություն, ինչը հաստատվել է հիմնադրամի կողմից: Այսպիսով, տվյալ նախագիծն ամբողջությամբ և դրական կարծիքով հաստատվեց Visegrad հիմնադրամի կողմից:

ԱՐՏԵՐԿՐՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՄԱԺՈՂՈՎՆԵՐ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐ

Մասնակցություն գիտաժողովներին և համաժողովներին

- Հայկական գինեգործությանը նվիրված միջոցառում Գերմանիայում
- GISCA'23 միջազգային աշխատաժողով Ղրղստանի մայրաքաղաքում (Բիշկեկ)
- Փարիզում «Հայաստանը խաչմերուկում, խաղաղություն և բարեկեցություն Եվրոպայի հարևանությամբ» համաժողով

Վերապատրաստումներ

2023 թ.-ին այլ (բացի Էրազմուս+-ից) ծրագրերով վերապատրաստման մեկնել են ՀԱԱՀ 28 աշխատակից.

- BSB Smart Farming Հունաստանում – 1 աշխատակից
- «Սելեկցիայի հիմնախնդիրները» միջազգային գիտական կոնֆերանս- 1 աշխատակից
- VISEGRAD –Նիտրա -1 աշխատակից
- ՀԳ2 GeoTAK -7 աշխատակից
- CESP2021-010 Համաշխարհային կենսաբազմազանության տեղեկատվական միջոցներ ՀԿՏՄ Ֆրանսիա և ՀԿՏՄ Հայաստան մենթորություն - 3 աշխատակից
- (GIZ) միջազգային համագործակցության գերմանական միություն- 1 աշխատակից
- "Հայաստանում գյուղատնտեսության ոլորտում մասնագիտական կրթության և ուսուցման արդիականացում" (MAVETA) ծրագիր – 2 աշխատակից
- 22IRF-10 ծածկագրով ծրագիր- 1 աշխատակից
- "Quality Assurance of Cross-border trade and Transportation of Food and Agricultural products by China-Europe Railwey Express" սեմինար – 8 աշխատակից
- Օրգանական գյուղատնտեսության հզորացում Հայաստանում. մասնակցային բարձրագույն կրթություն և գիտելիքի փոխանակում հանուն զարգացման» SOAA ծրագրի շրջանակում - 1 աշխատակից
- Նիդերլանդների Կրթության և վերապատրաստման Էրազմուս+ ազգային գործակալության (National Agency Erasmus+ Education & Training) - 1 աշխատակից

• Միջազգային Վիշեգրադ ծրագրի շրջանակներում - 1 աշխատակից:

ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ

2023 թ.-ում ՀԱԱՀ աշխատակիցներն ու ուսանողները հնարավորություն են ունեցել մասնակցել վերապատրաստումների, դասընթացների և միջազգային համաժողովների և հանդիպումների:

Գործուղումներ

Ծրագիր/պայմանագիր	**Քանակ**	
	ուսանողներ	անձնակազմ
Էրազմուս+ ՀԳ1	8	87
Էրազմուս+ՀԳ2		17
Այլ	1	38
Ընդամենը	**9**	**142**

ՄԿԴ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՄԿԴ-ն նախորդ տարիների նման առավելագույնս տարածել է միջազգային փոխանակման և դրամաշնորհային ծրագրերի վերաբերյալ առկա տեղեկատվությունը: Աշխատանքների թափանցիկության և տեղեկատվության տարածման արդյունավետության բարձրացման նպատակով հնարավոր բոլոր տեղեկությունները ՄԿԴ-ի կողմից տարածվում են սոց. ցանցերով և ՀԱԱՀ պաշտոնական կայքով:

Էրազմուս+ միջազգային տեղեկատվական օրերի շրջանակներում հոկտեմբեր ամսին ՄԿԴ-ն կազմակերպել էր 2-օրյա հանդիպումներ ՀԱԱՀ 1-ին կուրսեցիների հետ: Սակայն մի քանի տասնյակ 1-ին կուրսեցիներից ընդհամենը 19-ը ներկա գտնվեցին հանդիպմանը, ինչը խոսում է ուսանողների թույլ հետաքրքրվածության և դեկանատների կողմից տեղեկատվության տարածման և մասնակցության կազմակերպման ցածր աստիճանի մասին:

2022 թ.-ի դեկտեմբերի 1-ից մեկնարկեց «Կանաչ գործարքին միտված ակվակուլտուրայի և ձկնային տնտեսության կրթության զարգացում Հայաստանում և

Ուկրաինիայում. կրթությունից դեպի էկոլոգիա» ծրագիրը, որը աննախադեպ էր այն առումով, որ համակարգողը ՀԱԱՀ-ն էր:

ՄԿԴ պետ Գ. Համբարձումյանը՝ գործընկերներ երկրներից որպես միակ ներկայացուցիչ, 2023 թ. մայիս-հունիս ամիսներին մասնակցեց Նիդերլանդների Կրթության և վերապատրաստման Էրազմուս+ ազգային գործակալության կողմից կազմակերպվող միջազգային հանդիպմանը, որի նպատակն էր վերհանել Erasmus+ Charter-ի թույլ և ուժեղ կողմերն ու հավաքել կարծիքներ դրա հետագա բարելավման համար: Գ. Համբարձումյանը հնարավորություն ունեցավ ներկայացնելու գործընկեր երկրների փորձն ու կիսվել ՀԱԱՀ-ի էրազմուսյան փորձով ևս:

Այս տարի ևս դեպարտամենտի պաշտոնական ֆեյսբուքյան էջում և ՀԱԱՀ կայքում տեղադրվում են միջազգային ծրագրերի վերաբերյալ տարաբնույթ հայտարարություններ. Էրազմուս+ ՀԳ1 ծրագրի մրցույթներ, Էրազմուս+ ծրագրի մասնակցիների լավագույն փորձ, Էրազմուս+ ՀԳ2 ծրագրեր, տարբեր մրցույթներ, կրթաթոշակներ, տեսանյութեր և այլն: 2022-2023 թթ.-ին ՄԿԴ-ի կողմից տեղադրվել են շուրջ 132 նյութեր, որոնցից 47-ը եղել են Էրազմուս+ ՀԳ1-ի մրցույթների հայտարարություններ, 9-ը նյութեր Էրազմուս+ ՀԳ2 ծրագրերի ընթացիկ գործունեության մասին, 40-ը շարժունության մասնակիցների հոդվածներ, իսկ մնացածը՝ այլ բնույթի տեղեկություններ:

Շարժունության յուրաքանչյուր մասնակից վերադարձից հետո լրացնում է ՄԿԴ-ի կողմից տրամադրվող առցանց հարցաշարը, որով ՄԿԴ-ն վերհանում է շարժունության գործընթացի թույլ և ուժեղ կողմերը, վերլուծում արդյունքներն ու մշակում թույլ կողմերի վերացման ծրագրեր:

Հիմք ընդունելով ՄԿԴ-ի կողմից կատարվող պարբերական մոնիթորինգն ու դրանց արդյունքները, ՀԱԱՀ-ի միջազգային համագործակցության հետագա զարգացման և միջազգային հեղինակության բարձրացման նպատակով անհրաժեշտ է՝

1. Ուսանողների և աշխատակիցների շրջանում բարձրացնել օտար լեզվի իմացության մակարդակը: Շարժունության շատ մրցույթներ ուղղակի թափուր են մնում կամ մասնակցում են օտար լեզվի իմացության ոչ բավարարար մակարդակով մասնակիցներ:

2. Էրազմուս+-ի կամ այլ կրեդիտային շարժունության ծրագրերի առավել արդյունավետ կազմակերպման համար ամեն ֆակուլտետում պետք է լինեի գոնե մեկ ակադեմիական համակարգող: Սա ամենաթույլ կետերից մեկն է ՀԱԱՀ-ում, ինչի պատճառով ՄԿԴ-ն և հատկապես՝ թեկնածու ուսանողները, բախվում են անհարկի խոչընդտների: Որոշ ակադեմիական պատաստանատուներ դեռ չեն պատկերացնում շարժունության առանձնահատկությունն ու կրեդիտների փոխճանաչման հիմնական սկզբունքները:
3. Դասախոսների շրջանում ուժեղացնել միջազգային ծրագրեր կամ ծրագրային առաջարկներ գրելու կարողությունները: Դա անհրաժեշտ է այն տեսակետից, որ նեղ մասնագիտական ծրագրերին դիմելու դեպքում կարողանան կազմել և ներկայացնել ծրագրային փաթեթներ:
4. Ստեղծել օտար լեզվով դասավանդման կրթական ծրագրերի բազա (course catalog) և տեղեկատվական նյութեր: Դրսից տարբեր մարդիկ ցանկություն են հայտնում սովորել ՀԱԱՀ-ում, սակայն դեռևս բացակայում է օտարալեզու ծրագրերի վերաբերյալ ամբողջական տեղեկատվական բազան:

S	W
• միջազգային փոխանակման և դրամաշնորհային ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության տարածում • ՄԿԴ աշխատակիցների որակյալ, ակտիվ գործունեություն,	• օտար լեզվին տիրապետող ուսանողների և աշխատակիցների քանակի նվազում • համապատասխան ուսումնական ծրագրերի, ընդունելության կարգի բացակայություն օտարերկրյա ուսանողների համար • սեփական միջոցների անբավարարություն տարբեր վերապատրաստման դասընթացներին ՀԱԱՀ աշխատակցիների և ուսանողների մասնակցությունը ֆինանսավորելու համար • ոչ բավարար կենցաղային պայմաններ ՀԱԱՀ հանրակացարանում

	• որոշ ակադեմիական պատասխանատուների շրջանում շարժունության և կրեդիտների փոխճանաչման վերաբերյալ գիտելիքների պակաս
O	T
• ագրարային ոլորտի միակ բուհը ՀՀ-ում • ագրարային ոլորտի քաղաքականության խթանում կառավարության կողմից • կայուն միջազգային կապեր և գործընկերներ հատկապես ԵՄ համալսարանների հետ	• ուսանողների թվաքանակի պակասում, ինչը կարող է հանգեցնել որոշ ծրագրերի փակման • որոշ ԵՄ համալսարանների կողմից համագործակցության պայմանների խախտում • ՀՀ գտնվող դեսպանատների գերծանրաբեռնված վիճակ, որի պատճառով դժվարանում է իրականացնել շարժունությունը • Հայաստանում որոշ եվրոպական երկրների դեսպանատների բացակայություն երկարաժամկետ վիզաների համար • աշխարհաքաղաքական իրավիճակ